

ԱՌՈՒԲԵՆ ԲԵՐԲԵՐԵԱՆ

ՊԱՏՐԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԻՑ

IX

Եւրոպական հանրային կարծիքի պատրաստութեան փորձեր եւ լնկերվարական կուսակցութիւնների աջակցութիւնը .— Մեծ պետութիւնները անվերապահ պաշտպան թիւրքիայի .— Ահարեկչութեան ծրագիր .— Արէնֆ .— Գործելակերպի տարբեր կարծիքներ եւ վէներ .— Գործերը Արէնֆում :

Ես արդէն գրած էի, որ Հնչակեան կենտրոնը եկած էր այն եղակացութեան, որ զուգընթացաբար Հայ Յեղափոխական գործին՝ անհրաժեշտ է ստեղծել Արեւմտեան Եւրոպայում կայուն «Հասարական կարծիք» : Հայ աղատագրական նովատակներին ու Հայկական խնդրին փաստորէն ծանօթ էին միայն Եւրոպական դիւանադիտական շրջանակները . Հասարակութիւնը մերթ ընդ մէրթ «բան մը» լսում շրջանակները . Հասարակութիւնը մերթ ընդ մէրթ «բան մը» լսում էր, կարդում էր պատահական լրագրի պատահական հեռազրում, թէ «Թիւրքիայում Հայերը հալածուում են», կամ այս ու այն թրքաց վայրում թիւրք լսուժանը «Կոտորել է Հայ դիւղացիներին», եւ դրանով հեռագրական լուրերը վերջանում էին, առանց այդ Հարցին վերադառնալու կամ լուսաբանելու : Պարզ էր, որ Փրանսական գերմանական կամ անգլիական մեծ լրագիրները — որոնք ստեղծում գերմանական կամ հարցում, առհասարակ, «Հասարակական կարծիքը» — շահագրգռւած չէին Հայկական խնդրով ու Հայկական նորաստեղծ յեղափոխական գործով զբաղելու:

Հնչակեան կենտրոնը որոշած էր իր ուժերու ներած չափով զարկ տալ «Հայկական հարցի» պրոպագանդին եւ այդ նովատակով առաջարկել էր ինձ ժամանակաւորապէս տեղափոխուել Փարիզ : Մեր այն ժարկել էր ինձ ժամանակաւորապէս այնպէս էր, որ իմ գործունէութիւնը ժամանակայ մտայնութիւնը այնպէս էր, որ իմ գործունէութիւնը ժամանակայ մտայնութիւնը այնպէս պէտք է ընթանար Եւրոպայ Հարցի վերաբերմամբ առանձնապէս պէտք է ընթանար Հայկական ընկերվարական կուսակցութիւնների բարոյական աջակցութեամբ եւ կապերով :

Մենք մտածում էինք այսպէս . ընկերվարական կուսակցութիւնները օրէցօր ուժեղանում են Պարլամենտներում , նրանք ընդդրկում են ազգերի լայն շերտերը , իսկ վերջերս , մանաւանդ Գերմանիայում ու Ֆրանսայում , նախաձեռնող հասարակական ուժ են հանդիսանում : Դիմէինք նոյնպէս եւ այն , որ եթէ մենք ի մօտոյ ծանօթացնէինք եւ բարական աչքի ընկնող ընկերվարականներին մեր նպատակներին եւ զործունէութեան , կամկածից դուրս է , ասում էինք , որ գործօն աշակցութիւն պիտի ցոյց տային մեզ . չէ՞ որ , վերջապէս , հայ յեղափոխական կուսակցութիւնը միեւնոյն ժամանակ եւ ընկերվարական դաղափարներ էր որդեգրած եւ ընդհանուր ընկերվարութեան մի ճիւղն էր կազմում . . .

Այս տեսակ մտքերը տեսականօրէն , ի հարկէ , ճիշդ էին , բայց փորձնական կեանքում նրանք մեծ «ճեղքեր» ի յայտ բերին :

1892 աշնան գալով Փարիզ՝ ևս ներկայացայ Ֆրանսական Ընկերվարական «Մարքսիստ» կոչւած Կուսակցութեան , որի հիմնադիրները եւ ամենանդում , թերեւս «ամենալուրջ» անդամներն էին Պարլամենտի պատգամաւորներ Ժիւլ Գէդը և Պոլ Լաֆարզը : Կուսակցութիւնը ունէր «Գէդիստ» յորջորջումը : Ֆրանսական Ընկերվարականութեան այդ թերը տարբերում էր ընկերվարական միւս խմբակներից (Ալէմանիստ , Բլանկիստ , Մալոնիստ) : Որոշ հիսաթափում զդացի , երբ ծանօթացայ դրանցից շատերին եւ տեսայ , որ ընկերվարական գործելակերպի հարցերում տարբեր խմբակները իրար հետ բանապէճի մէջ էին . Ֆրանսական բանւոր զանգվածներն էլ յաճախ իրար վրա նայում էին իրրեւ հակառակորդների . այդ պատճառով , Փրանսական ընկերվարականների պարբերական հրատարակութիւնները խաչաձեւում էին միմեանց եւ չունէին այն բարոյական հեղինակութիւնը , որը ամենայն իրաւունքով կոչւած էին ունենալու :

Պէտք է ասեմ , որ Ժընեւի մեր բարեկամ եւ հայասէր Պէխիսանովի կողմից (որը Ռուս . Սոց . - Դեմ . Կուսակցութեան հիմնադիրն էր եւ տաղանդաւոր արտայայտիչը) ունէի մի շատ լաւ յանձնարարական Պոլ Լաֆարզին ուղղւած : Լաֆարզը Պարլամենտի անդամ էր , «Socialiste» շաբաթաթերթի խմբագիր (Ժիւլ Գէդի հետ) , ամուսնացած էր Մարքսի կրտսեր աղջկայ հետ (Տ . Լառուայ) : Գըրում եւ խօսում էր բացի Փրանսերէնից , նաեւ անդլիերէն եւ գերմանէրէն եւ , կարելի է ասել , որ Փրանսական ընկերվարականների մէջ ամենակրթւած քաղաքական գործիչն էր : Ֆրանսական ընկերվարականները այն ժամանակները (ինչպէս շատ տարիներ յետոյ) չէին փայլում իրենց կրթութեամբ (ընկերային , տնտեսագիտական եւ ըն-

կերաբանական հարցերի տեսակէտից), բացի ԼաՓարգից, Գէղից, Վայանից, իսկ Հետազայում եւ Ժոկսից: Բայց Ֆրանս. Ընկերվարական Կուսակցութիւնը իր գործելակերպով ցոյց էր տալիս մեծ եռանդ, մեծ յամառութիւն. ունէր լաւ հոետորներ եւ լաւ պրոպագանդիսաներ՝ ընդունակ բանուր զանգւածները յարատեւ ընդվզումի ու չղային վիճակի մէջ պահելու: Գարով կազմակերպական ընդունակութիւնների՝ Ֆրանս. Ընկերվարութիւնը թոյլ էր եւ այն ժամանակ, եւ Հետազայում: Գործի այդ կողմը լաւ էր գրւած գերմանական մարքսիստների կամ սոցիալ-դեմոկրատների մօտ. սրանց ազգեցութիւնը եւ հեղինակութիւնը գերման ժողովրդի լայն խաւերի վրա անհամեմատ աւելի մեծ էր եւ հիմնաւորւած:

Իմ վերաբերմամբ Պոլ ԼաՓարգը ցոյց տեղ անսահման բարեացակամութիւն: Մօտ 52 - 55 տարեկան մարդ էր նա, կրթութեամբ՝ բժիշկ, սիրում էր բնական գիտութիւնները եւ իրաւոնք ունէր իմ վրա նայելու, իրբեւ իր որդու: Համարեա ամէն շաբաթ օր ես այցելում էի նրա տունը, ուր ծանօթացայ Փրանս. երիտասարդ ընկերվարականների հետ (Բուտկ, Զէվաէն, Թիէսուէն, Լազառդէ եւ ուրիշները, իսկ Հետազային ԼաՓարգի քենու որդի ժան Լոնդէ): Շուտուով ինձ ընդունեցին «Ֆրանսական Կոլլէկտիվիստ (ընկերվարական) Ուսանողութեան անդամ»: Նոյն ԼաՓարգը ինձ կապեց նաեւ Բերլինի շատ տարածւած ընկերվարական «Ֆորվէոց» օրաթերթի հետ, ու աշնան վերջերը արդէն պարբերաբար հաղորդում էի թէ՝ «Ֆորվէոց»ին եւ թէ Փրանս. «Socialiste» ու «Petite République» օրաթերթին ևեղեկութիւններ թրքական ոչքիմի, թրքահայ ժողովուրդի տնտեսական եւ քաղաքական վիճակի, այլ եւ ամփոփ տեղեկութիւններ թըրկան գահայ զաւառներում եղած անցուղարձի մասին:

Երբ արդէն բաւականին մտերմացել էի ԼաՓարգի հետ, բարուք համարեցի ծանօթացնել նրան (կանխօրօք ստանալով Նազարէկի համաձայնութիւնը) եւ մեր նախաղծին, որի մասին Ժընեւում քանից լիսամած էինք Նազարէկի հետ:

Ինչպէս արդէն պատմել եմ, ես սիրում էի բնական գիտութիւնները եւ, յատկապէս, զբաղւած էի քիմիական փորձերի աշխատանքները եւ, յատկապէս, զբաղւած էի գիտական փորձերի աշխատանքները եւ, յատկապէս, զբաղւած էի շարունակեցի եւ Սորբոնում: Նոյն այդ աշխատանքները շարունակեցի եւ Սորբոնում: Պէտք է ասել, որ հնչակեան յեղափոխական գործելակերպը սկզբուն-քէտք է ասել, որ հնչակեան յեղափոխական գործելակերպը սկզբուն-քով ընդունում էր ահարեկչական միջոցները թիւրք պաշտօնեաների, քով ընդունում էր ահարեկչական միջոցները թիւրք կառավարութեան վերահայ լրտեսների եւ, առ հասարակ, թիւրք կառավարութեան վերաբերմամբ. յաճախի ոչ միայն իրբեւ պատիժ, այլ եւ որպէս պրոպարերմամբ. յաճախի ոչ միայն իրբեւ պատիժ, այլ եւ որպէս պրոպարերմամբ:

թութիւն յարուցանել Պոլսի եւրոպական գիւանագէտների շրջանում ու այդպէսով նրանց ուշադրութիւնը դարձնել դէպի հայ ժողովրդի վիճակի վրա : Մենք ծրագրած էինք Սուլթանի վրա նետել մի քանի հատ նոր տեսակի եւ նոր ձեւի ոռոմբեր . մեր հաշւով , ուժանակը օդը պիտի բարձրացնէր թէ՛ Սուլթանի կառքը եւ թէ նրան շրջապատող ձիաւորներին : Այն տարիները Սուլթան Համիդը բաց կառքով ամէն ուրբաթ պալատից գուրս էր զալիս եւ գնում սելամլըֆի : Պէտք էին մի քանի զուտ տեղական արտաքին յարմարութիւններ (կառքի անցած փողոցի վրա տուն վարձել , երկու մարդ դնել ամբոխի մէջ իրրեւ «պահեստի ուժ» (որոնք նոյնպէս պէտք է ունենային ուժանակներ) , մի քանի պատրաստած անցագիրներ (եւրոպացու անունով) եւ , ի հարկէ , յամենայն դէպս , 100 - 200 ոսկի դրամ՝ տաճկաց սահմանները թողնելու պարագային :

Այդ ահարեկչական նախագիծը մեզ թւում էր ոչ միայն հնարաւոր , այլ եւ օգտակար հայկական խնդրին նոր եւ վերջնական զարկ տալու տեսակէտից . մանաւանդ , եթէ յաջողւէր Համիդին ոչնչացնել , Եւրոպայի աչքում մեծ ուժ պիտի ստանար հայ ժողովրդի գերազոյն միջոցների դիմելը եւ , ուրեմն , պիտի ստիպէր Եւրոպական դիւտանգիտութեանը՝ հայկական խնդրին անհրաժեշտ լուծումը տալու եւ նախ եւ առաջ բարենորոգումներ մտցնելու Հայաստանում :

Մի օր , երբ Լաֆարդի առանձնասենենեակում պատմում էի իմ ստացած (Աթէնքից , Նազարեէկից) վերջին նորութիւնների մասին , խօսքը - խօսքին բերելով՝ հարցրի նրանից , թէ կարո՞ղ է արդեօք Լաֆարդը գտնել մեզ համար 4 - 5 Փրանսական անցագիրներ , եթէ դրանց պէտքը զդացւի , եւ ծանօթացըրի նրան մեր ահարեկչական ծըրագրին : Մի սատիւնով նա իր նստած տեղից մօտեցաւ ինձ եւ օձիք բռնելով՝ բացականչեց .

— Դուք կը տապալէք ե՛ւ ձեր կուսակցութիւնը , ե՛ւ Հայկական հարցը . . . : Մի՞թէ չէք տեսնում , թէ ի՞նչ է կատարում Եւրոպայում եւ ո՞ր աստիճանի ջղայնացած է Եւրոպայի հասարակական կարծիքը . . . :

Ես զարմացած հարցում եմ .

— Ի՞նչ կայ . ես ոչինչ չեմ տեսնում . . . :

— Զէ՞ք տեսնում , որ Փրանսական , սպանիական եւ իտալական անիշխանականները բան ու գործ են արել ուժանակներ պայթեցնել եւ ահարեկել Եւրոպական բուրժուա խաւերը . . . : Ֆրանսայում տեղի ունեցան մի քանի ահարեկչական դէպքեր . անիշխանականներից մի քանիսը ձերբակալեցին , միւսները փախան Անգլիա : Խօսք կայ , որ

Եւրոպական կառավարութիւնները յատուկ դաշինք ստորագրեն եւ փոխադարձաբար բոլոր անիշխանականներին ձերբակալեն։ Դուք պէտք է գիտնաք, որ օգտւելով այդ անիշխանականների ահաբեկչական դէպքերից՝ գերմանական եւ ռուսական կառավարութիւնները գիտակցաբար անիշխանականներին եւ ընկերվարականներին խառնում են, որպէսզի կարողանան հետապնդել նաև ընկերվարականներին։ Աշխատում են ցոյց տալ, որ անիշխանականները միեւնոյն նիշիլիստներն ու ընկերվարականներն են...։ Ուրեմն, եթէ դուք հայ յեղափոխականներդ ահաբեկչութեան դիմէք եւ մէջտեղը բացի այդ անիծեալ Սուլթանի սատկելուց, մի քանի անմեղ մարդիկ էլ, մանաւանդ եւրոպական դիւանագիտական մարմնին պատկանած անհատներ էլ զոհ գնան, էլ ի՞նչ աղմուկ, էլ ի՞նչ հարայ - հրոց պիտի բարձրացնէ եւրոպական դիւնագահիտութիւնը։ Արդէն դուք լաւ գիտէք, որ եւրոպական մեծ մամուլը նրանցից օժանդակում է, այդ մամուլը աշխարհի ամբողջ աղտը պիտի թափէ ձեր խեղճ ժողովրդի եւ մասնաւորապէս ձեր յեղափոխական կուսակցութիւնների գլխին։ Մի՞թէ կարծում էք, որ կաշառուած մեծ մամուլը այդ դէպքից յետոյ ձեր հարցը պիտի պաշտպանէ։ Այս էլ ասեմ։ մենք ընկերվարականներս կարծում ենք, որ ֆրանսայում տեղի ունեցած վերջին ահաբեկչական դէպքերը մասսամբ ոստիկանութեան փրավուժախոնի հետեւանքով են եղած։ Կառավարութիւնը շահագրգուած է հասարակութեան լայն խաւերի աչքում անիշխանականներին ներկայացնել իրեւ յեղափոխական ընկերվարականներ։ Մի մոռնաք եւ այն, որ առաջին հերթին ռուսական կառավարութիւնը ձեզ պիտի անւանէ «անիշխանականներ» եւ այդ ձեւով պիտի ներկայացնէ ձեր դործն ու ձեր տղդային բաղձանքները...։

— Բայց, կտրում եմ ԼաՓարգի խօսքերը, Ռուսաստանից զատկայ եւ անգլիական եւ ֆրանսական դիւանագիտութիւնը, որը իրադեկ է հայկական հարցին...։

— Իմ սիրելի ընկեր, ջղուտ խօսքերով ընդմիջում է ԼաՓարգը, չգիտէք, որ վերջերս ստորագրուած է ռուսեւֆրանսական դաշնագիրը, եւ մի՞թէ կարծում էք, որ ֆրանս կառավարութիւնը թրագայ հարցում Ռուսաստանի կողմը չէ լինելու...։

— Անգլիան..., փորձում եմ յայտնել միտքս, բայց ԼաՓարդ, նորից մօտենալով ինձ ու աչքերիս նայելով՝ ասում է.

— Լո՞ւրջ էք ասում. չգիտէք, որ Սոլլսբիւրիի եւ Գլազուտոնի հակառակութիւնը թիւրքիայի վերաբերմամբ զուտ անգլիական ներքանքներից մօտենալով ինձ ու աչքերիս նայելով՝ ասում է։ Մի՞թէ դուք հաւատում էք, որ որ

եւ է բուրժուա եւրոպական կառավարութիւն շահագրղուած է Թիւրքիայում տիրող կարգերի փոփոխման հարցով... :

Լաֆարզը սիրում էր սուր եւ կծու համեմատութիւններ եւ օրինակներ, երբ խօսք էր լինում «կապիտալիստ պետութիւնների մասին»: Մի օր նա ինձ ասում էր. «Կողոպուտի ու որսի սիրահար կապիտալիստ մեծ պետութիւնները դործ ունեն վայրի խողի — Թիւրքիայի — հետ, բայց քանի որ դեռ իրար հետ համաձայնութիւն չեն դտած՝ խողի ո՞ր մասը ո՞ւմ տալը, աղատ պիտի թողնեն այդ որսը, թէկուզ այդ կատաղած վայրի խողը ահագին չարիքներ ու զրկանքներ պատճառէ իր շուրջը...»: Պատկերաւոր մարդարէութիւն էր լաֆարզի միտքը հետազայ դէպքերի վերաբերմամբ:

Վերջերս իմ ձեռքը ինկաւ մի զաղոնի համաձայնագիր, որ կնքած է եղել դեռ 1887 թ. Գերմանիայի, Աւստրիայի եւ Իտալիայի միջև, շարունակում է Լաֆարզը, եւ մօտենալով իր հարուստ մատենադարնի դարակներին՝ եւ դուրս բերելով ինչ որ մի թլթածրար՝ կարդում է ինձ. — «... 1887 թ. Հոկտեմբերի .. մենք, երեք մեծ պետութիւնների ներկայացուցիչներս՝ գերմանական, աւստրիական եւ իտալական...»: Դաշինքը յայտնում է այն միտքը, որ երեք պետութիւնները շահագրղուած են «անփոփոխ պահել եւ պաշտպանել արդի բալկաննեան երկիրների եւ, մասնաւորապէս», Թիւրքիայի երկրամասերի սահմանները»: Այլ եւ՝ «գալով վարչական - բարենորոգչական հարցերին այդ երկրամասերում՝ դիմադրել այն բոլոր դէպքերում, երբ նրանց իրազործումով կարող է փոխել եւրոպական ներկայ հաւասարակշռութիւնը յօդուած այս կամ այն միացեալ երեք մեծ պետութիւնների (Անգլիայի, Ռուսաստանի և Ֆրանսայի)»:

Ես այնքան զգացւած էի այս անակնկալից, որ բոլորովին շշմած միմակի մէջ էի գտնւում:

— Դուք, ի հարկէ, չգիտէք այս պետութիւնների գաղտնի համաձայնութեան մասին, հարցնում է ինձ Լաֆարզը:

— Ո՞չ, ծանօթ չէի..., ինդրեմ, նորից կրկնեցէք՝ Ի՞րը է ստորագրած այդ համաձայնութիւնը:

— 1887 թ. Հոկտեմբեր ամսին...:

Մի պահ աչքերս փակում եմ: Մի ակնթարթում յիշողութիւնս ինձ թերագրում է, որ նոյն 1887 թ.-ին, նոյն Հոկտեմբեր ամսին ծրնեւել էր հայ առաջին յեղափոխական կուսակցութեան ձեւաւորւած ծրբագիրը եւ «Հնչակ»-ը, որ նպատակ էր դրած ազատել թրքահայ ժողովուրդը քաղաքական եւ տնտեսական սորկութիւնից, դիմելով

գործօն միջոցների եւ յեղափոխական գործելակերպի։ Այլեւս չէ՞ տեսնում Լաֆարդին, որ իր գլանիկն էր վառում, այլ՝ 1887 թ. Հոկտեմբերը։ Այդ թւականը, այդ զուգագիպութիւնը իմ աչքում մի տեսակ խորհրդանիշ էր այդ պահին։ Ի՞նչ զարհուրելի դիպւած երկու հակոսնեայ ծրագիրների՝ համարեա թէ միեւնոյն շաբաթը յդացւած տարրեր բեւենների վրա……։

Հայ յեղափոխական կուսակցութիւնները երբեք ապաւինած չէին եւրոպական մեծ պետութիւնների գթասրտութեան, «քրիստոնէական զգացմունքներին», նրանց «մարդկային խղճին»։ Բայց այն մտայնութիւնը ունէին, դէթ սկզբում, որ մեծ պետութիւններից մի քանիսը տնտեսապէս շահագրգռւած են Թիւրքիայի ճակատագրով, իսկ միւսները, յամենայն դէպս, չէզոք վերաբերմունք ունին դէպի թըրքահայ գաւառների վարչական - բարենորոգչական հարցը։ Յատկապէս Հնչակեան կուսակցութիւնը ուսուական կառավարութեան վրա նայում էր իրեւ «Երկրորդ թշնամու», Թիւրքիան «առաջին» թշնամին էր։ Բայց այժմ Լաֆարդի մէջ բերած դաշինքից երեւում է, որ մինչեւ իսկ Միւս եւրոպական կառավարութիւնների մտահոգութիւնն է անխախտ պահել Թիւրքիան «իր պետական սահմաններով եւ վարչական կազմով …»։

Երբ հրաժեշտ տալով Լաֆարդին՝ վերադառնում էի իմ ուսանողական սենեակը, զգում էի, որ մեր յեղափոխական գործունէութեան մէջ պէտք է ինչ որ փոփոխութիւններ մտցնել, դէթ առ ժամանակի, մինչեւ որ պարզի, թէ ովքե՞ր են, վերջապէս, Թիւրքերի անկեղծ պաշտպանները, հետեւապէս՝ ովքե՞ր են լինելու եւ մեր անկեղծ կամ կեղծաւոր թշնամինները։ Բայց ի՞նչ փոփոխութիւն, ո՞ր մարդում, եւ ի՞նչպէս ձեւաւորւած՝ այդ շրջանին ես չէի կարող յըտակօրէն գիտակցել։ Ինձ համար պարզ էր միայն մի բան։ Հայ յեղափոխական գործը աւելի մեծ գժւարութիւնների է հանդիպելու, քան թէ մենք սովոր ենք կարծելու։ Բայց այդ նոր գժւարութիւնները ոչ մի վայրկեան իմ մէջ չէին սպանում յեղափոխութեան անհրաժեշտութեան համոզումը։ Ինչո՞ւ։

Որովհետեւ իմ եւ իմ ընկերների մէջ, բացի զուտ մարդկային զգացմունքների ընդպամմից, ծառացած էր այն համոզմունքը, որ Հայ Յեղափոխութիւնը վերացական ու արիեստական երեւոյթ չէ, ինչ ինտեւաթէ է քրիստոյ կեսնէի պատմական երկար ու բարդ իրեալի դրուքնան։ Հետեւարար, նաև անհրաժեշտութիւն է. որ մեր կուսակցութիւնը լոկ պիտակից գործադրողն է այն պահանջին, որ կայսակցութիւնը լոկ պիտակից գործադրողն է այն պահանջին, որ կայսերի դոյլութիւն ունի Հայ իրականութեան մէջ, եւ մենք չէ որ ստեղ-

ծեցինք յեղափոխութիւնը եւ նրա գործելակերպը : Մեր մշտական համոզումն էր, որ Հայ յեղափոխական դաղափարը ծնւած էր Հայութեան մէջ զեռ 50-ական թւականներում . այդ պատմական շրջանումն էր նոյնալիս տեղի ունեցել Զէյթունի ապստամբութիւնը, որ իր օրինակով ցոյց էր տւել միակ իրական գործելակերպը, երբ մի ժողովուրդ պատութեան է դիմում : իլ չեմ առնում նոյն պատմական շրջանում տեղի ունեցած համընթաց դէպքերը՝ Կրէտացիների, Սեւլեռնցիների, Սերբերի ապստամբութիւնները, որոնք մի - մի փայլուն օրինակներ էին թէ՛ 60-ական թւականների գիտակից Հայրենասէրների եւ թէ հետագայ սերունդի համար :

Ուզում եմ ասել, որ Հայ Յեղափոխութեան անհրաժեշտութեան սկզբունքը ինձ համար անվիճելի էր, բայց չնորհիւ նոր տւեալների, թշնամու ուժերի նոր սարքաւորման՝ յեղափոխութեան դիմող մի-ջոցները կարող են յաճախ շարժւել, ցնցւել, տեղափոխւել, կարող են յեղափոխական կուսակցութիւնը ստիպել նոր գործելակերպի դիմել, հետեւապէս եւ աւելի յարմար ուազմավարութեան . չէ՞ որ մի-այն եղիպտական բուրգերն են անշարժ ու քարացած . . . :

Անցել էին մի քանի օրեր, երբ Փարիզում տեղի ունեցան անիշխանականների ահարեկչական նոր դէպքեր : Նորից աւերակների մի-ջից դուրս հանւեցին մեռած ու վիրաւոր հասարակ բնակիչներ . կատաղած ամրոխը անիծում էր անիշխանականներին : Կրկնող դէպքերը նոյնքան անիմաստ էին, որքան եւ անհեթեթ : Անիշխանականների այս ձեւի «բողոքը բուրժուական կարգուսարքի դէմ» գոեհիկ ու գժւած խելառների եւ յիմարանոցից փախած հիւանդների գործի տը-պաւորութիւնն էր թողնում, ու նորից եւրոպական մամուլը պահանջում է օր առաջ սանձահարել «բոլոր անիշխանականներին եւ նման յեղափոխականներին», որոնք քաղաքական ակտիւ գործունէութեան են դիմում : Ու նորից ոռւս գեսպան Մոռէնհայմը դիմում է Փրանս . կառավարութեան, որ վերջինս առիթից օգտականի՝ արտաքսէ Ֆրանսայից բոլոր ոռւս քաղաքական տարագիրներին, թէեւ պարզ էր, «որ սրանք (ընդհանուր յորջութումով նիշիլիստները) ոչ մէկ առնչութիւն չունէին Փրանսական անիշխանականների հետ : Այդ շարաթները Փարիզի «Ֆիգարօ» թերթը տպեց իր մի լրագրողի եւ թիւրք գեսպանի «մասնաւոր զրոյցը», որի ժամանակ դեսպանը ակնարկել էր, թէ «ամէն ազգի մէջ կան անիշխանականներ, օրինակ, Թիւրքիայումն էլ Հայերի որոշ շերտեր, որոնք Պոլսում ահարեկչական միջոցների են դիմում թիւրք կառավարութեան դէմ . . . » :

Ահա այդ իւրայատուկ փարիզեան մթնոլորտումն էի գտնուում եւ

1893թ. գարնան առաջին ամիսները, երբ մանրամասն տեղեկացրի Աթէնք եւրոպական կեանքի մասին. դրեցի նոյնալէս, որ անհրաժեշտ եմ համարում վերաբննել ու վերամշակել մեր յեղափոխական գործելակերպի որոշ կողմէրը. վճռական կերպով ինդրում էի չձեռնարկել որ եւ է նոր ցոյցեր՝ մինչեւ որ եւ միւս ընկերները չհաւաքւնք Աթէնք եւ չքննենք իրերի դրութիւնը: Հաղորդում էի, նոյնալէս, որ թէեւ մեր սկսած պրոպագանդը (Հայկական Հարցի մասին) մեծ համակրանք է ստանում ընկերվարական մամուլում՝ ե՛ւ ֆրանսայում, ե՛ւ Գերմանիայում, մինչեւ իսկ Բելժիքայում, բայց եւրոպական մեծ մամուլը ո՛չ ակնարկում է մեր տաճ տեղեկութիւնների վրա, ոչ էլ արտատպում է այն բազմաթիւ եւ հետաքրքրական տեղեկութիւնները, որոնք զետեղւած են լինում ընկերվարական թերթերում:

Նազարբէկից ստանում եմ պատասխան, որով նա խնդրում էր անմիջապէս մէկնել Աթէնք. բայց նամակի երեք քառորդը խօսում էր իր՝ Նազարբէկի գրական նոր ծրագիրների, նոր գրած յեղափոխական քերթւածների («Մարտում», «Բանւորը», «Դարբինը», եւլն.) մասին. խնդրում էր, որ Աթէնք ճանապարհ ընկնելուց առաջ գնամ Փարիզի իր ապրած նախկին բնակարանի պահապանից վերցնեմ ինչ որ արկդ, որի մէջ կան «մեծ քանակութեամբ ինձ մտերիմ նամակներ, եւլն. . . *)

Ցիշում եմ, որ նամակի զուտ գրական բնոյթը ինձ զայրացրեց. բացիկով պատասխանեցի, թէ քաղաքական կուսակցական ղեկավարը չպէտք է բանաստեղծ կամ վիպագիր լինի. բանաստեղծութիւնը եւ քաղաքականութիւնը անյարիր են իրար եւ եթէ մի անձնաւորութեան մէջ են պատահում, տուժում է կամ մէկը, կամ միւսը . . . : Միջանկեալ ասեմ, որ իմ այդ կարծիքից վիրաւորել էր ոչ այնքան ինքը Նազարբէկը, որքան կինը՝ Տիկ. Մարօն . . . :

Ապրիլի վերջերին, Մարտէյլի վրայով ճանապարհ եմ ընկնում Աթէնք: Նախօրօք հանդիպում եմ Մոնպելիէ, որտեղ կազմւած էր Հնչակեան Ուսանողական Մասնաճիւղ, որի գործօն աշխատողներն էին ուսանողներ թ. , Պ. եւ Է. ն: Վերջինս յատկապէս հետաքրքրում

*) Այդ արկդում, որ հետո էի տանում Աթէնք, կային գր. Արծրունու մի քանի նամակները եւ Ծերենցի երեսունի մօտ նամակները: Հայ վիպագիրը մօտ ազգական էր Նազարբէկեան եւ Մելիք Ազարեան ընտանիքներին. իր նամակները գրած էին ուսանող Նազարբէկին. շատ հետաքրքրական էին իրրեւ արտայայտութիւն 80-ական բականմերում Ծերենցի ապրումներին ու հոգեբանութեան:

էր տնտեսագիտական - ընկերային հարցերով, եւ վեց ամիս առաջ նրան յանձնել էի Փրանսերէնից հայերէնի թարգմանել Ք. Մարքսի «Կապիտալ»-ի առաջին հատորի ամփոփ եւ ժողովրդականացրած, որ գրած էր Գաբրիէլ Դէվիլը: Ուսանող է. և Պոլսի նախկին Կեդրոնականներիցն էր, քաջ գիտէր հայերէնն ու Փրանսերէնը: Այդ հատորը հետո տարի Աթէնք, որ հրատարակենք. ձեռագիրը մնաց Հնչակեան կեդրոնական թղթերում. սկզբում նրա հրատարակութիւնը յետաձգեց. իսկ հետագայում, չգիտեմ, ի՞նչ ճակատագիր ունեցաւ այդ բարեխղճօրէն կատարւած աշխատանքը: *) Գիտեմ որ «Կապիտալ»-ը հայերէն չհրատարկեց, իսկ է. և ին այնուհետեւ չպատահեցի իմ կեանքում . . . :

Երբ 1893 թ. Ապրիլին եկայ Աթէնք, այնուեղ արգէն հաւաքւած էին մօտ տասը ընկերներ, որոնք պատրաստում էին գնալ կամ վերադառնալ թրքահայ գաւառները: Աթէնքումն էին Հմ. Խուշպուլեանը, Աչըքպաշեանը, Սարգիս Աղամիրզեանը, Լեւոն Բարսեղեանը եւ ուրիշներ: Ռուբէն Խանազատը դեռ իմ հասնելուց առաջ, արգէն ճանապարհ էր ընկել Ամերիկայի Միացեալ Նահանգները, որտեղ հիմք պիտի դնէր Հնչակեան մասնաճիւղերի:

Աթէնքում գործը աւելի հեշտ էր Հնչակեան կենտրոնի համար. յոյն քաղաքական խաւերը, մինչեւ իսկ յունական կառավարութիւնը բարեացակամ էին վերաբերում: Ճիշդ է, Պոլսից արգէն եկած էին մէկ - երկու թրքական լրտեսներ, բայց նրանք ոչինչ չէին կարող անել եւ մնում էին ձեռնունայն: Մի օր ինքը յոյն ոստիկանապետը անպաշտօն կերպով հաղորդել էր մեզ, որ այս օրերս թիւրք նոր լըրտես է եկել Աթէնք եւ բնակում է մեր ապրած փողոցի դիմացի տան մէջ . . . :

Աթէնքում իմացայ, որ Ս. Աղամիրզեանը գնալու է Թաւրիկ իր ըեւ կենտրոնի լիազօր, որտեղից մերթ ընդ մերթ տեղափոխուելու է կաղմակերպչական նպատակով վասպուրական. նրա տնօրինութեան էր յանձնւած ոչ միայն Վան գէնքեր փոխադրելու դործը, այլ եւ ոռւս - պարսկական սահմանակից վայրերում կապեր հաստատելը եւ յեղափոխական թերթեր ու գրքոյիներ կովկաս ներմուծելու բարդ գործը:

*) Հետաքրքական է, առհասարակ՝ ի՞նչ եղաւ Հնչակեան Կուսակցութեան դիւնամը, ի՞նչ եղան բոլոր գործերն ու վաւերազրերը, որոնք ահազին պատմական արձեք ներկայացնող քղբեր պիտի է լինեն:

Իմ նեկայութեամբ հարց դրւած էր եւ լեւոն Բարսեղեանի Մարդուան գնալու ծրագիրը։ Լ. Բարսեղեանը աւարտած էր Ժընեւ Համալսարանի հասարակագիտական բաժինը, Յովնան Դաւթեանի մտերիմ ընկերն էր, համեստ, լուրջ, ազդասէր, լաւ ծանօթ ընկերվարական վարդապետութեան ու համոզած ընկերվարական երիտասարդ էր, բայց փորձառութիւն չունէր ո՛չ կազմակերպիչի, ո՛չ պրոպագանդիստի։ Հղիսէր եւ նոյնապէս թիւրքերէն։ Մարդուանի շուրջը չղային յեղափոխական ցանցեր կային միայն ցաք ու ցրիւ անհատնոր, որ տողորւած էին յեղափոխական զդացումներով, բայց յեղափախական կազմակերպութիւն փաւորէն դոյութիւն չունէր այն կողմէրը։

Դուրս էր դալիս, որ Բարսեղեանին Մարդուան ուղարկում են միայն այն դիմումի վրա, որ այնտեղից արել էր մէկը՝ խնդրելով «լիազօր մը դրկել այս կողմերը»։ Ես հակառակ էի այդ ծրագրին. առաջարկում էի թողնել Մարդուանը, որի համար ոչ մի կերպով օգտակար չի կարող լինել մեր ընկեր Բարսեղեանը, եւ առաջարկում էի գնալ կամ Պոլիս, կամ Կարին եւ կամ, վերջապէս, Վան։ Ես պնդում էի, որ մեր սւժերը թէ՛ մարդով եւ թէ՛ զէնքով այնքա՞ն թոյլ են եւ քիչ, որ իրաւունք չընկենք վատնել եւ վտանգի ենթարկել այնպիսի վայրերում, որտեղից մինչեւ իսկ լուրեր չեն հասնում եւրոպա։ Ենթադրում էր, որ Բարսեղեանը Մարդուանում պիտի զբացւէր մասնաճիւղերի օղակներ հաստատելով, ապա հարեւան գաւառի հետ կապւելով՝ մի շարք ցոյցեր պիտի անէր։

Վիճաբանութիւնների ժամանակ ես բերում էի իմ բոլոր առարկութիւնները, մեր ներկայ պայմաններում, նոր ցոյցեր անելու դէմ։ Անտեղի էի համարում, մինչեւ իսկ վնասակար այսօր իսկ կրկնել այն, ինչ որ երեք տարրի առաջ պէտք էր եւ օգտակար էր եղել։ Պայմանները փոխւած են. մեր ցոյցերին կարող են հետեւիլ կոտորածները, իսկ մինք ոչ մի վայրում չընենք անհրաժեշտ զէնքը ինքնապաշտպանութեան համար։ Մէջ էի բերում եւ այն առարկութիւնը, որ Պոլսում ատրճանակի մը պայթիւնը աւելի մեծ ազդակէ, քան թէ հեռու գաւառի հեռու մէկ անկիւնում լւող թնդանօթը։ Պոլսից զատ, իրեւ բացառութիւն, առաջարկում էի Կարինը կամ Վանը, իրեւ Ռուսաստանի սահմանակից կէտեր, որոնց անդորրութիւնը եւ կամ ապստամբական դէպքերը յատկապէս շահագրգռում են անդլիական դիւնաղիտութիւնը, քանի որ սրա համոզմամբ ոռւսական կառավարութիւնը այդ վայրերից իր աչքը չի հեռացնում։

Մեր վիճաբանութիւնները շարունակւեցին մի քանի օր, ու մե-

ծամասնութեամբ որոշւեց շարունակել քաղաքական ցոյցերը եւ Պոլսում, եւ գաւառներում: Երբ ես խնդրեցի, որ արձանագրութեան մէջ մտցնեն իմ բոլոր առարկութիւնները եւ իմ յայտարարութիւնը, որ ես աղատ եմ զգում ինձ պատասխանատութիւնից (Եթէ մեր մանր ցոյցերին հետեւեն մեծ կոտորածներ), Մարօն եւ ընկերներից մի քանիսը բողոքեցին իմ խօսքերի դէմ: « Մենք, ասում էին նրանք, ամենքս պատասխանատու ենք մեր բոլորիս արածի համար. այսօր դու համաձայն չես այս գործելակերպի հետ, վաղը մենք համաձայն կարող ենք չինել մի ուրիշ գործելակերպի հետ, բայց ինչ որ վինում է, վինում է կենտրոնի անունից. ես ու դուի հարց չկայ » :

Ես վերին աստիճանի ընկճած էի զգում ինձ եւ մի պահ լուս-թիւնից յետոյ, նստած տեղիցս ելայ եւ ասի. « Ոչ ոք եւ երբեք չի կարող ինձ ստիպել գործելու իմ համոզմունքի դէմ. Եթէ լուեմ ու ձեր գործելակերպը ընդունած երեւամ, պիտի մեղանչեմ իմ մարդկային խղճիս դէմ. շարունակեցէք ձեր կարգադրութիւնները եւ վը-ճիռները առանց ինձ » :

Այստեղ անմիջապէս պէտք է աւելացնեմ, որ ոչ այս տողերը եւ ոչ էլ այն ամենը, որ վերյիշում եմ, քննադատութիւն չէ իմ նախկին ընկերների հանդէպ: Քննադատել 40 տարիներից յետոյ ապերախտ, թերեւս եւ ապարդիւն աշխատանք է. ես ուզում եմ միայն պատմել, գուցէ եւ պարզել նախ եւ առաջ ինձ համար այն երեւոյթը, որ երփներանդ քաղաքական կեանքում միեւնոյն իրական աւեաների առաջ, միեւնոյն ելակէտից բխած, մինչեւ իսկ միեւնոյն կէտնպատակ - իդէալը որդեղը մտերիմ ընկերները՝ յաճախ թեքում են ընդունած ճամբու ուղղութիւնից եւ գործելակերպի նոր ու տարբեր ուղիներ ընդունում: Ինչո՞ւ. ինչի՞ց դրդւած :

Յաճախ մտածում եմ՝ արդեօք անձնական խառնւածքից, կրթութեան եւ ճաշակի տարբերութիւնից է այդ, թէ՞ գլխաւոր պատճառը հէնց նոյն քաղաքական գործունէկութեան էութեան մէջ է: Մի էութիւն, որի ծուծը ներգործական համակերպման մէջ է գտնուում: Քաղաքական գործունէկութեան իմաստը միեւնոյն ժամանակ ե՞ւ տապալումն է, ե՞ւ ստեղծագործում՝ իրերի գրութեան, աշխարհահայեցքի ու մտայնութեան, բայց տապալել եւ ստեղծագործել ներգործապէս կարելի է միայն յենւած իրականութեան վրա եւ առաջնորդւելով բազմերանդ քաղաքական - ընկերային կեանքի ընթացքով: Ուրեմն համակերպելը անհրաժեշտութիւնն է...: Արդարեւ՝ իմ բերած առարկութիւնների պատճառաբանութիւնը այն էր, որ մեր կուսակցութիւնը դեռ պատրաստ չէ նորից դիմելու այն աղմը-

կալից ցոյցերին եւ քայլերին, որոնց աղմուկը մեծ է, բայց յեղափոխական արդիւնքը շատ չնշին, եթէ չհաշւենք կրկնող կոտորածների մեծ հետեւանքը, ինչպէս այդ տեսանք անցեալ տարւայ Սասունի առաջին ապատամբական փորձերից յետոյ: Ես չէի հերքում որ այդ ներգործական քայլերը պէտք են, բայց անհրաժեշտ էի գտնում նաև իրապէս պատրաստել գէթ այնչափով, որ եթէ ըստ ամենայն հաւանականութեան մեր նոր ցոյցերից յետոյ թիւրք կառավարութիւնը կոտորածի գիմէ, մենք պատրաստ լինենք ինքնապաշտպանութեան, որ մեզ հետ գնացող ժողովուրդը չմնայ առանց պաշտպանութեան միջոցների: Ուրեմն՝ նախ եւ առաջ պէտք է պատրաստենք, որովհետեւ մեր ուժերը շատ թոյլ են. պէտք է համակերպւենք նոր, կամ մեզ համար նոր երեւցող պայմաններին եւ ըստ այնմ ուղղենք մեր գործելակերպը:

Իմ ընկերները, առանց հերքելու, որ մեր կուսակցութիւնը թոյլ է եւ կազմակերպչական, ե'ւ նիւթական ու զինքերի պատրաստութեան տեսակէտից, այնուամենայնիւ գտնում էին, որ ժողովրդի հոգերանութեան, մինչեւ իսկ յեղափոխութեան լայնացման ու խորացման տեսակէտից վնասակար են ամէն տեսակ գործօն յետաձըդումները՝ «Բաւական է ինչքան Փրազներով կերակրած ենք հայ ժողովուրդը», մէջ էր ըերում Մարօն: «Ատանկ գայթակղած կ'ըլլանք դաւափի մեր ընկերները», ասում էր Աչքպաշեանը: «Կը զարմանամ քո անհամակրելի «խոհեմ» առաջարկներուն», երեսիս էր տալիս Խոչչպուրեանը: Մի պահ ես նայում էի Բարսեղեանին, որ լուր էր եւ մտահոգ: Նազարբէլը, որը ընդունում էր «իրար ետեւից կրկնըւող ցոյցերի օգուտը», մի տեսակ կարեկցութեամբ ասում էր. «Քեռը շալակողը «ծանր է» չի ասում»: Ինձ հետ համաձայն էր միայն Ս. Աղամիրզեանը:

Պէտք է խոստովանիմ, որ վիճաբանութեան ժամանակ ես գիտակցում էի, որ ինձ հետ անհամաձայն ընկերների հոգերանութիւնը աւելի յեղափոխական է, աւելի վսեմ, քան թէ այն անփայլ ժործելակերպն ու ներգործական համակերպման սկզբունքը, որ ես էի առաջարկում: Աւելին. բարոյապէս ես մեծ ցաւ էի զգում, որ նրանց պէս չեմ մտածում եւ չունեմ նրանց ջերմ հաւատը դէպի մէկ անդամ ընդ միշտ կուսակցութեան որդեգրած դործելակերպը:

Այդպէս ծնւել էին առաջին տարակուսանքները, բայց ճեղքեր գեռ չկային. գոնէ ես ինքս չէի տեսնում եւ չէի զգում. ներքուստ ես կուսում էի իմ յոռետեսութեան դէմ:

Շուտով եւ յաջորդաբար մեր ընկերները ուղեւորւեցին մէկը դէ-

ովի Պարսկաստան, միւսը՝ Տրապիզոնի ուղղութեամբ, Երրորդը՝ Մարզւան, չորրորդը՝ Կիպրոս ու այնտեղից դէպի Հաճըն: Աթէնքում, այսինքն Կուսակցութեան «Կենտրոնում», ըստ սովորութեան մնացին Նազարբէկեան ամուսինները ու ժամանակաւորապէս՝ ես: Կայքն եւ երկու գրաշարներ փախստականներից, բայց նրանք Կենտրոնի գործերով չէին զրադում: Իմ մասին ասում եմ «ժամանակաւորապէս», որովհետեւ լճուած էր, որ ես կարձ ժամանակով պէտք է զնամ Պոլիս եւ այնտեղից Կովկաս: Բայց երբ Նազարբէկեանները մենակ մնացին, ու մենք դիմեցինք «Հերթական գործերին», սարսափեցանք այն սկզբած ու չվերջացած նամակներից եւ կարգադրութիւններից, որոնք կուտակւած սպասում էին, մինչեւ որ Կենտրոնը իր երկար վիճաբանութիւնները վերջացնէ ցոյցերի եւ նրանց աշխարհազրական վայրների մասին եւ անցնէ հերթական աշխատանքներին. Հերթի էր սպասում եւ զուտ հրատարակչական գործը:

Պէտք է ասեմ, որ 1893 Մայիսին «Հնչակ»-ը (ութը կամ տասը էջ) դուրս էր զալիս առաջւայ պէս ամիսը մի անգամ, բայց 1800 օրինակ: Առաքումը կաղում էր, Թիւրքիա եւ Ռուսաստան ներմուծւող կապոցները յաճախ ենթարկում էին հասցէնների փոփոխութեան ու նոր հնարաւորութիւնների յարմարութեան: Այդ գործը պահանջում էր մեծ ուշադրութիւն եւ ժամանակ: «Հնչակ»-ում յաճախ երեւում էին Միհրան Տամատեանի փայլուն յօդւածները Երկրից. նրա ուղարկած նամակների բովանդակութիւնը, տեղից ստացած թարմ եւ քննած լուրերը, վիճակագրական տւեալները, ժողովրդի բարոյական վիճակը, կենդանի լեզուն, տեղային իշխանութեան բնութագծերը, յաճախ հեղնօրէն ու համարեա միշտ ուազմաշունչ՝ կարգացւում էին անվերջ հետաքրքրութեամբ: Տամատեանը ուղարկում էր երկրից եւ իր յեղափոխական բովանդակութիւն կրող ոտանաւորները. մի քանի տեղերից հաղորդում էին կենտրոնին, որ այդ ոտանաւորները երենց տեղի յեղափոխականները անդիր են արած. առանձնապէս տարածւած էր Տամատեանի «Տալորիկցի կտրիճ եմ քաջ»-ը, որ երգի վերածւած:

Հրատարակութեան համար պատրաստած էին մի քանի գրքոյկեներ — զուտ ընկերվարական կամ քաղաքական բովանդակութեամբ: Ես հետո բերել էի իմ թարգմանած Լասալի «Սահմանադրութեան էութեան մասին»-ը՝ կցելով նրան ստւար յառաջարան ընկերվարութեան ու մարդկային ընդհանուր պատմութեան դիալէկտիկ մեթոսի բասին: Գրքոյկը լոյս տեսաւ իմ ներկայութեամբ:

Բացի այդ, գեռ Ժընեւում միտք էր յայտնւած, որ անհրաժեշտ

Է ունենալ մի եռամսեայ պարբերական հանդէս՝ նւիրւած «գիտական ընկերվարութեան» — «Գաղափար» հանդէսը, որ դուրս պիտի դար միայն մի քանի ամիսներից յետոյ: Աչքի առաջ ունենալով համարեա միշտ կենտրոնում մնացած ընկերների փոքր քանակը, եւ հրատարակչական գործի հետ կապւած պարտականութիւնների աճումը, անհրաժեշտ էր ամենաքիչը երկու մարդ (Նազարեէկից դատ, որ «Հնչակ»-ի խմբագիրն էր), որ ծայրը ծայրին բերէին: Հակառակ դրան եւ առանց չափելու թէ՛ իր, թէ՛ ուրիշների զուտ Փիղիքական ուժն ու անհրաժեշտ ժամանակը, Նազարեէկը վճռում է մի նոր ամսաթերթ եւս հրատարակել «Ապտակ» անունով, որը պարսաւով ու ծաղրանկարով, իրը թէ, պիտի փոխէր հայ հանրային գործիչների մտայնութիւնն ու հոգեբանութիւնը: Այդ առթիւ դեռ «Ապտակ»-ի առաջին համարը դուրս չեկած, ես Նազարեէկին յայտնեցի, որ չեմ համակրում այդ նախաձեռնութեան. նախ՝ մենք չափից դուրս ծանրաբեռնւած ենք մեր առաջնակարգ գործերով, ու յետոյ՝ բոլորովին անտեղի եմ զըստում, ներկայ պայմաններում, ծաղրի ենթարկել Պոլսոյ սստիկանին զուգընթաց Պոլսոյ «Հոս - հոս մտաւորական»-ին, «անդլիական դեւանակէտների բարի աչքին ապաւինող հայ խմբագիրներ»-ին, «հաստափոր հայ բարձր կղեր»-ին, եւայլն:

Պէտք է ասեմ այստեղ, որ ընդունելով հանդերձ ծաղրի, երդի ծանրքի նշանակութիւնը հայ մտաւոր կեանքի զարգացման որոշ պատմական շրջաններում՝ ես աւելորդ էի կտնում մեր յեղափոխական առաջին խոկ շրջանում ծաղրով ու երդիծանքով, եթէ չասեմ պարսաւներով չըրադւել ու հասարակութիւնը զբաղեցնել՝ հեռացնելով մեղնից ու թշնամացնելով մեղ հայ հանրութեան այն խաւերը, որոնց օգնութիւնը, մինչեւ խոկ չէղոք դիրքը՝ անհրաժեշտ էր հայ լեզափոխական բարդ եւ ծանր գործի համար: Ծաղրը, պարսաւը յաճախ մեծ գործօն են, բայց միշտ բացասական, քանդող, տապալող ու համարեա երբեք չստեղծագործող: Ծաղրը ընդունակ է տարրալուծելու, վհատեցնելու, ծիծաղ շարժելու, բայց եւ վշտացնելու, նորանոր թշնամիներ ստեղծելու եւ մեր հակառակորդների բանակը մեծացնելու: Մեր վիճաբանութեան ժամանակ ես բերում էի օրինակներ Փրանսական քաղաքական կեանքից. բերում էի եւ մեր բանաստեղծ Գամառ - Քաթիպայի օրինակը, երբ նա «Սիւլիւկ» կեղծանուան տակ հրատարակեց հարիւրի չափ ծաղրանկար ուստանաւորներ ու 8 - 10 պարսաւագրեր, աննման, փայլուն, անդերազանց հայ գրականութեան մէջ եւ, սակայն, որոնք մատի չափ դրական, ստեղծագործիչ հետեւանքներ չտեին: Ծաղրանկարը, անչուշտ, աղդում է ընթերցողի

վրա մի ժամ, մի օր, թերեւս մի քանի օր. իսկ յետո՞յ. յետոյ ամէն բան մոռացւում է. ծաղրի ենթարկւած «ենթական» չի փոխւում, շարունակում է նոյնը անել, նոյն ձեւով մտածել, յաճախ՝ նոր ձեւերի տակ, նոր գոյներով քողարկւած: Բացի այդ եւ գլասաւորը, փորձում էի համոզել Նազարբէկին, որ պէտք չէ մեր մտաւոր ու Փիզիքական ուժերը ցրւել ու ջլատել:

Բայց Նազարբէկը համոզւած էր, որ «քաղաքական ծաղրանքը պահանջ մըն է չէզոք խաւերի համար, որոնք այդ միջոցով շատ աւելի եւ շատ շուտ կը կարողանան կազմել ճիշդ կարծիքներ հայկական կեանքի մասին»:

Ինչպէս եւ յայտնել էի Նազարբէկին, ես «մատ չտւի» «Ապտակ»-ին. նա հրատարակւում էր, խարազանում ու ծաղրի ենթարկում մի շարք հայ հանրային գործիչներ, բայց թէ մատի չափ փոխեց նրանց արածն ու անելիքը — կասկածում եմ:

Մոռացայ ասել, որ Նազարբէկը նկարչութեան ընդունակութիւն էլ ունէր, եւ «Ապտակ»-ի շատ նկարները ինքն էր արել: Ինձ համար նրա այդ աշխատանքը ժամալաճառութիւն էր, իսկ նրա համար, երեւի, որոշ «գոհացում»՝ ե'ւ խօսքով, ե'ւ նկարով «լերջնականապէս տապալել» այս կամ այն հակառակորդին, կամ թշնամոյն:

Փարիզ

(Վերջը յաջորդ անգամ)

